# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 5
## N 113303392 գնման պայմանագրի 23 հուլիսի 2013թ-ին կնքված լրացուցիչ համաձայնագրի

**ք.Երևան**

**14 հունիսի 2023թ.**

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, (այսուհետ՝ Բաժանորդ), մի կողմից և «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ-ն՝ ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքների վարչության ղեկավար Կ.Ասատուրյանի (այսուհետ՝ Օպերատոր), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ կողմեր, հիմք ընդունելով N 113303392 գնման պայմանագրի 23 հուլիսի 2013թ-ին կնքված լրացուցիչ համաձայնագրի 12-րդ կետը(Այսուհետ Պայմանագիր) և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետը կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցը լրացնել՝ համաձայն սույն Համաձայնագրի **N1** հավելվածի:

1.2. Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

**Բաժանորդ**
Վարչապետի աշխատակազմ
Ք.Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
/ստորագրություն/Կ.Տ

**Օպերատոր**
«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ
Ք.Երևան, Ազատության 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052

---------------------------------
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 1
113303392 ծածկագրով պայմանագրի
14 հունիսի 2023թ. կնքված N 5 Համաձայնագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Բջջային հեռախոսների ծառայություններ |
| --- |
| PRO 1 սակագնային փաթեթը – 1 քարտ<br><br>1. Բջջային Ինտերնետ՝ 7 ԳԲ,<br>2. Րոպեներ դեպի ՀՀ, Արցախ, ԱՄՆ և Կանադայի բոլոր ցանցեր, Beeline ՌԴ և Tele2՝ 400 րոպե<br>3. TeamTV՝ 40 ալիք,<br>4. SMS դեպի ՀՀ և Արցախ բջջային ցանցեր՝ 400 SMS,<br>5. Րոպեներ Team բջջային ցանցի ներսում՝ ներառված րոպեները սպառելուց հետո՝ 10,000 րոպե,<br>6. Րոպեներ «փակ խմբի» ներսում՝ անսահմանափակ: |

**Բաժանորդ**
Վարչապետի աշխատակազմ
Ք.Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

---------------------------------------
/ստորագրություն/Կ.Տ

**Օպերատոր**
«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ
Ք.Երևան, Ազատության 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052

---------------------------------------
/ստորագրություն/Կ.Տ